



# Պատասխաններ Օնթարիոյի

## ՏԱՐԵՑՆԵՐ

### ՈՒՂԵՑՈՅՑ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՇՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՍԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Գաւառական տարեցներու քարտուղարութիւնը կը հրատարակէ ուղեցոյց տարեցներու ծրագիրներու եւ ծառայութիւններու համար - (A Guide to Programs and Services) 16 լեզուներով: Զանգեցէք տարեցներու INFOLine 1-888-910-1999 ստանալու ուղեցոյցը: Աւելի գիտնալու տարեցներու աջակցութիւններու մասին, այցելեցէք [www.seniors.gov.on.ca](http://www.seniors.gov.on.ca) կամ [findlink.at/SeniorGuid](http://findlink.at/SeniorGuid)

### ԲՆԱԿԱՐԱՆ

#### Տնային յարմարում

Շատ տարեցներ կը ցանկանան իրենց սեփական տուններուն մէջ ապրիլ: Օնթարիոյի կառավարութիւնը կ'ապահովէ ֆինանսական օգնութիւն տարեցներուն նորոգելու իրենց տունները, որպէսզի անոնք կարենան անկախ ապրիլ: Յաւելեալ տեղեկութիւններու համար, այցելեցէք [www.seniors.gov.on.ca](http://www.seniors.gov.on.ca) կամ [findlink.at/homeadapt](http://findlink.at/homeadapt)

#### Չափահասներու ապրելակերպի համայնքներ

Այս համայնքները անկախ ապրելու բնակատեղիներ են հանգստեան կոչուողներուն համար: Բնակարանի ընտրութիւնները կը ներառեն գիւղաքաղաքի տուններ, համատիրութիւններ (condominiums/condos) եւ փոքր տուններ: Մշտաբնակները կը վճարեն լման ծախսը: Հասարակական եւ կազդուրման զբաղմունքները ձեռնտու են տեղւոյն վրայ:

#### Շերանոցներ

Շերանոցները անձնական գործեր են որոնք կ'ապահովեն կացարան, աջակցութեան

ծառայութիւններ եւ անձնական խնամք տարեցներուն: Այս տունները արտոնագրուած են Օնթարիոյի կառավարութեան ծերանոցներու կանոնակարգող իրաւասութեան կողմէ (Retirement Homes Regulatory Authority - RHRA): Մշտաբնակները կը վճարեն լման ծախսը: Շերանոցներու ցանկի մը համար շրջանին հասնմատ, այցելեցէք [www.rhra.ca](http://www.rhra.ca):

### ԽՆԱՄՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւելի գիտնալու հետեւեալ տարեցներու խնամքի ընտրութիւններու համար, այցելեցէք Ministry of Health and Long-Term Care - [www.health.gov.on.ca](http://www.health.gov.on.ca) կամ [findlink.at/senior](http://findlink.at/senior)

- **Տնային խնամք** - Կը ներառէ տնային այցելութիւններ առողջութեան մասնագէտներու կողմէ, ինչպէս հիւանդապահուիչներ եւ ֆիզիքական բուժողներ; անձնական խնամք, ինչպէս առողջաբանութեան օգնութիւն; տան խնամքի օգնութիւն, ներառեալ եփել եւ լուացք:
- **Օգնութեամբ ապրելու ծառայութիւնները** կ'օգնեն տկար տարեցներուն շարունակելու ապրիլ տունին մէջ ապահովելով խնամք հերթական ձեւով կամ պէտք եղած ատեն:
- **Համայնքի ծրագիրները** կը ներառեն հսկուած չափահասներու օրուայ ծրագիրներ, ուտելիքի եւ փոխադրումի ծառայութիւններ:

**Երկար ժամանակի խնամքի տուններ** - Բնակատեղիներ են տարեցներու որոնք կարիք ունին 24 ժամ հիւանդապահի խնամքի կամ հսկողութեան: Այս տունները արտոնագրուած են առողջապահութեան եւ երկար ժամանակի խնամակալութեան նախարարութեան կողմէ (Ministry of Health and Long-Term Care):

1-855-626-0002  
[www.orientationontario.ca](http://www.orientationontario.ca)



Մշտաբնակները կը վճարեն միայն կացարանին ծախսը – հիւանդապահության խնամքը եւ անձնական ծառայությունները վճարուած են գաւառական կառավարության կողմէ: Գտնելու համար երկար ժամանակի խնամքի տուններ ձեր շրջանին մէջ, այցելեցէք [www.seniors.gov.on.ca](http://www.seniors.gov.on.ca) կամ [findlink.at/longcare](http://findlink.at/longcare):

**Նշում:** Խնամք գտնելու առաջին քայլը կապ պահելն է ձեր տեղական համայնքի խնամքի կեդրոնին հետ (Community Care Access Centre - CCAC): Այցելեցէք [www.ccac-ont.ca](http://www.ccac-ont.ca) կամ [www.healthcareathome.ca](http://www.healthcareathome.ca), կամ հեռաձայնեցէք առանց վճարի 310-2222 (առանց շրջանի թիվի):

## ՕԳՈՒՏՆԵՐ

### Մերութեան անվտանգութեան կենսաթոշակ (Old Age Security - OAS)

(OAS)-ը ամսաթոշակ մըն է վճարուած 65 տարեկան անձերու կամ աւելի մեծ: Տարիքը որ (OAS)-ը կը սկսի աստիճանաբար պիտի վերածուի 67-ի: 1958-ի եւ անկէ ետք ծնունդ մարդիկը պիտի ազդուին այս փոփոխութենէն: Իրաւունք ունենալու (OAS)-ի, պէտք է որ ապրած ըլլաք 10 տարի կամ աւելի Գանատայի մէջ 18 տարեկանէն ետք:

### Ապահով եկամուտի յաւելում (Guaranteed Income Supplement - GIS)

Եթէ քիչ եկամուտով տարեց էք եւ կը ստանաք (OAS)-ի օգուտներ, իրաւունք կ'ունենաք նաեւ (GIS)-ի: Աւելի գիտցէք (OAS) եւ (GIS)-ի մասին (Service Canada)-ի միջոցաւ:

Այցելեցէք [www.servicecanada.gc.ca](http://www.servicecanada.gc.ca) կամ [findlink.at/SsFXrD](http://findlink.at/SsFXrD), կամ հեռաձայնեցէք 1-800-277-9914

**Նշում:** Պէտք է դիմէք (OAS)-ի եւ (GIS)-ի (ServiceCanada)-ի միջոցաւ, եթէ ոչ կարելի չէ ինքնաբերաբար ստանալ այս նպաստները:

### Ապահով տարեկան եկամուտի համակարգ (Guaranteed Annual Income System - GAINS)

Կարող էք ինքնաբերաբար իրաւունք ունենալ այս գաւառական եկամուտի յաւելման ծրագրին եթէ արդէն կը ստանաք (OAS) եւ (GIS)-ի օգուտներ, եւ ձեր ամբողջ եկամուտը աւելի քիչ է այն մակարդակէն որ ապահովուած է գաւառին կողմէ:

Աւելի գիտնալու, այցելեցէք Ministry of Finance [www.fin.gov.on.ca](http://www.fin.gov.on.ca) կամ հեռաձայնեցէք 1-866-668-8297

### Գանատայի կենսաթոշակի ծրագիր (CPP)

(CPP)-ն ձեռնտու է հանգստեան կոչուած քաղաքացիներուն եւ մշտաբնակներուն համար: Գանատայի մէջ աշխատողները պարտադիր օժանդակություններ կ'ընեն ծրագրին եկամուտի տուրքի համակարգի միջոցաւ: Կարող էք դիմել (CPP)-ին երբ հանգստեան կոչուած էք: Ձեր ամսաթոշակի գումարը կախեալ է ձեր օժանդակութեան գումարէն: Յաւելեալ տեղեկություններու համար, այցելեցէք (ServiceCanada) [www.servicecanada.gc.ca](http://www.servicecanada.gc.ca) կամ [findlink.at/ CPP](http://findlink.at/ CPP):

### Օնթարիոյի դեղի օգուտի ծրագիր

Այս ծրագիրը կը վճարէ Օնթարիոյի բնակիչներու դեղագիրները որոնք 65 տարեկան կամ աւելի մեծ են: Աւելի գիտնալու այցելեցէք [www.ontario.ca](http://www.ontario.ca) կամ [findlink.at/ODB](http://findlink.at/ODB) կամ հեռաձայնեցէք 1-866-532-3161

### ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ԵՒ ԱՊԱՆՎՈՒԹԻՒՆ

Տարեցի չարաշահումը ունէ մէկ արարք մըն է, որ կը վստահեցնէ տարեց անձերու առողջութիւնը կամ բարեկեցութիւնը, եւ կարող է ներառել ֆինանսական, հոգեկան, ֆիզիքական կամ սեռային չարաշահում: Այս կարող է պատահիլ տունին մէջ կամ դուրսը, համայնքին մէջ:

Եթէ դուք կամ տարեց անձ մը որ կը ճանչնաք գոհ է տարեցի չարաշահման, օգնութիւն կայ:-

- Տարեցի ապահովութեան գիծը (Senior Safety Line) կ'ապահովէ տեղեկություններ, ուղղություններ եւ աջակցություններ 24 ժամ օրական, աւելի քան 150 լեզուներով: Նաեւ կարող էք զեկուցել չարաշահման մասին: Զանգեցէք 1-866-299-1011


### ԿԱՐԵՒՈՐ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- Եթէ բժշկական արկած ունիք, հեռացայնեցէք 911 եւ խնդրեցէք շտապ օգնութեան ինքնաշարժ:
- Գիտնալու համայնքի եւ կազմակերպման ծրագիրներու մասին տարեցներու համար ձեր շրջանին մէջ, հեռաձայնեցէք 211:
- Օնթարիոյի մարդու իրաւունքներու օրինագրի տակ, արգիլուած է ձեր հետ անիրաւացիօրէն վարուիլ ձեր տարիքի պատճառաւ: Աւելի շտապ կարգալու համար այցելեցէք - Ontario Human Rights Commission: [www.ohrc.on.ca](http://www.ohrc.on.ca):



### Գիտէի՞ք թէ:

Իրաւունք ունենալու կառավարութեան գրեթէ ամբողջ ծրագիրներուն, պէտք է պաշտօնապէս ներկայացնէք անձնական եկամուտի տուրքի հաշուեթուղթ, ամեն տարի:



### Կարելոր նշում

Ոճրագործները ընդհանրապէս թիրախ կը բռնեն տարեցները դրամական խարդախութեան արարքներու համար: Գիտցէք ինչպէս պաշտպանել ձեր անձը եւ ուրիշները այցելելով Գանատական հակա-խարդախութեան կեդրոնը - Canadian Anti-Fraud Centre: [www.antifraudcentre.ca](http://www.antifraudcentre.ca)

